ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

14 փետրվարի 2013թ.

Թիվ Ե- 54/13

ՀՀ Լոռու մարզպետ՝ Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ավագանու 14.02.2013թ N1-Ա որոշումը:

Առդիր՝ 22 թերթ:

Լեռնապատի գյուղապետ՝ Ս. Աբազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322- 6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2013 թվականի N1-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016թթ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով, հաշվի առնելով նաև 37-րդ, 38-րդ հոդվածները և ՀՀ կառավարության 2012թ. Հոկտեմբերի 5-ի թիվ 1351-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերը՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել 2013-2016թթ Համայնքի զարգացման <Քառամյա ծրագիրը>/հավելված1/:

Կողմ (7) Դեմ (0) Չեռնպահ (0)

ՍԵՐՅՈԺԱ ԱԲԱԶՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ
ՄՀԵՌ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ
ՖԻՐՈՒԶԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱՐԿԱԴԻ ԱԲԱԶՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՐՅՈԳԻՆ

Համայնքի ղեկավար՝ Սարիբեկ Աբազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016թթ

ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար Ս. Աբազյանը

Հաստատվել է համայնքի ավագանու նիստում

2013-2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է քառամյա ծրագիրը---------- 3
2. Համայնքի իրավիճակի գնահատում----------8
3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները--------9
4. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում-------9
5. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում----------18
6. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները----------19
7. Գյուղատնտեսության ցուցանիշները----------20

Համայնքի ենթակառույցները և համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցները---------- Հավելված -1

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմադիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լեռնապատ համայքը հնագույն բնակավայր է: Նրա տարածքում հայտնաբերվել են բրոնզեդարյան բնակատեղիներ և գործիքներ: Պահպանվել են նաև միջնադարյան հուշարձանի մնացորդներ և գերեզմաններ: Համյանքը գտնվում է Լոռու մարզում, Փամբակի լեռնաշխթայի լանջին, Երևան- Վանաձոր միջազգային մայրուղուց 2 կմ արևմուտք: Հեռավորությունը Վանաձոր քաղաքից ավտոճանապարհով 15կմ է դեպի հյուսիս-արևմուտք:

Համայնքի կենտրոնով հոսում է Լեռնաջուր գետը: Կլիման բարեխառն է՝ ամռանը մեղմ և զով, առավելագույն ջերմաստիճանը 36 աստիճան: Ձմռանը նույնպես մեղմ է, բայց երկարատև: Առավելագույն աստիճանը դիտարկվել է մինչև -20 աստիճան: Ծովի մակարդակից միջին բարձրությունը 1500 մ է:

Ժողովրդագրություն

Գյուղն ունի՝ 629 տնտեսություն և 2345 բնակիչ, որոնցից տղամարդիկ- 1143, կին- 1202:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

1. Երեխաներ/0-6 տ./- 162
2. Դպրոցականներ/6-18տ./- 234
3. 19-63 տարեկան- 1680
4. Թոշակառուներ – 269
5. Հաշմանդամներ- 150
6. Աշխատունակներ-1680
7. 4 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների թիվը-17
8. Ընտրողների թիվը-1543

Գյուղի 629 ծխից 237 ծուխ ընդգրկված են <Փարոս> համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի/գյուղապետի/ կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Գյուղապետն ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

1. Գյուղապետ	1 դրույք
2. Գյուղապետի տեղակալ	1 դրույք
3. Գյուղապետի օգնական	1 դրույք
4. Գ/պ աշխատակազմի քարտուղար	1 դրույք
5. Առաջ. մասնագետ հաշվապահ	1 դրույք
6. Առաջ. մասնագետ	1 դրույք
7. Կ/պ 1-ին կարգի մասնագետ գանձապահ	1 դրույք
8. Կ/պ 1-ին կարգի մասնագետ	1 դրույք
9. Կ/պ 2-ին կարգի մասնագետ	1 դրույք

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
10. Հավաքարար	1 դրույք
11. Պահակ	1 դրույք
12. Պահակ	1 դրույք
13. Վարորդ	1 դրույք
14. Վարորդ	1 դրույք

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑՆԵՐՆ ԵՆ.

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

1. Տնօրեն	1 դրույք
2. Հաշվապահ	1 դրույք
3. Խոհարար	1 դրույք
4. Դաստիարակ	0.7 դրույք
5. Դաստիարակի օգնական	1 դրույք

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997 թ. Թիվ 51 որոշմամբ՝ հետևյալ կազմով.

Փայտե ֆրանսիական հավաքովի տնակ	1 միավոր
Ավտոմեքենա <Օպել Վեկտրա>	1 միավոր
Ավտոբուս <Պազ 672>	1 միավոր
Մանկապարտեզի փայտե մասնաշենք	1 միավոր
Վագոն տնակ	1 միավոր
Մանկապարտեզի կաթսայատուն	1 միավոր
Վառարան	1 միավոր
Քարե շինություն	1 միավոր

Համայնքի ենթակայության մանկապարտեզի փայտե մասնաշենքերը և վագոն տնակը բարոյապես և ֆիզիկապես մաշված են ու չեն համապատասխանում պահանջվող չափանիշներին: Քանդված, ավիրված վիճակում են նաև կաթսայատունը, մյուս քարե շինությունները և հետագա շահագործման համար ոչ պիտանի են: Անհրաժեշտ է կառուցել նոր մանկապարտեզ և մշակույթի տուն/տես հավելված 1/:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքը բաժանված է հին ու նոր գյուղերի, երկուսում գործում է խմելու ջրի և ոռոգման ցանց: Չունի կոյուղի, որի պատճառով սանիտարահիգիենիկ պայմանները հաճախ չեն պահպանվում: Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով, մոտ 50% -ով: Խիստ կարիք կա ոռոգման ներքին ցանցի նորոգման, որը գտնվում է անմխիթար վիճակում: Կապված Նոր գյուղում բնակարանների կառուցման հետ, նոր գյուղի խմելու ջրի ներքին ցանցի ընդլայման խիստ կարիք կա: Պրոբլեմային է նաև աղբահանության հարցը:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 124 առանձնատուն՝ 12 հազ. քառ մ տարածքով: 629 -տնտեսություն օգտվում են ջրմուղից, հեռախոսից օգտվողներ 230, գազի ծառայությունից՝ 195 ընտանիք:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ	Ընդ. 4399.40/հա/
1.1 վարելահող	295.08
1.2 բազմ.տնկ.	---
1.2.1 այդ թվում՝պտղ.	---
1.2.2 Խաղողի այգի	487.46
1.3 Խոտհարք	1845.07
1.4 Արոտ	3190.56
1.5 Այլ հողատեսքեր	419.88
2. Բնակավայրերի ընդ. տարածք	243.57
2.1 Բնակելի կառույց.	177.71
2.1.1 Այդ թվում	149.93
2.1.2 Այեգ-ն /ամառ/	27.78
2.2 Հասարակական	2.35
2.3 Խառը կառուցապատ	---
2.4 Ընդհանուր օգտագործման	33.86
2.5 Այլ հողեր	29.65
3. Արդյունաբերական ընդ.	57.91
3.1 Արդյունաբ.	2.24
3.2 Գյուղ.արտադր	2.40
3.3 Պահեստարաններ	---
3.4 Ընդերք	53.27
4. Էներգետիկային,տրանսպ. և կապի	6.04
4.1 Էներգետիկայի	3.31
4.2 Կապի	---
4.3 Տրանսպորտի	1.29
4.4 Կոմունալ ենթակառույց	1.44
5. հատուկ պահպանման տարածք.	3.91
5.1 Պատմ. և մշակույթ	3.91
6. հատուկ նշան.	---
7. անտառային	477.10
7.1 Անտառ	438.52
7.2 Թփուտ	29.32
8. Ջրային ընդ. տարածք	16.77
8.1 Գետեր	13.74
8.2 Ջրամբարներ	0.65
8.3 Լճեր	1.11
8.4 Ջրանցքներ	1.27
Ընդամենը վարչական տարածք	5231.70

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի արտադրությամբ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, որի կառուցումն ավարտվել է 2007թ-ին: Դպրոցն ունի շուրջ 234 աշակերտ, 41 աշխատատեղ: Ապահովված է կենցաղի, խմելու ջրով, ունի լոկալ կոյուղի: Դպրոցն ունի իրեն անհատույց հատկացված 0,1936 հա հողատարածք: Վերջին տարիներին կրճատվել է սովորողների թիվը բնակչության արտագաղթի պատճառով: Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով: Մեկ ուսուցչին ընկնում է 16 աշակերտ: Նախադպրոցական դաստիարակությունն իրականացվում է գործող մանկապարտեզի միջոցով, որտեղ հաճախում է 25 երեխա:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է ամբուլատորիա, որը հագեցած է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Այնտեղ աշխատում են վերապատրաստված 1 բժիշկ և 4 բուժքույր: Գյուղի առողջապահական վիճակը բարվոք է: Բարվոք է նաև գյուղի սանիտարահիգիենիկ վիճակը, սակայն այստեղ դեռ անելիքներ կան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1. Համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում մարզկենտրոնին մոտ, հանրապետական նշանակության ավտոճանապարհին մոտ:
2. Համայնքը գտնվում է անտառամերձ գոտում, ունի մեծ չափի արոտավայրեր և վարելահողեր, որը հնարավորություն է տալիս զարգացնել գյուղատնտեսությունը, հատկապես անասնապահությունը:
3. Համայնքը 32- % -ով գազաֆիկացված է: Աշխատանքները դեռ շարունակվում են:
4. Համայնքը ամբողջությամբ հեռախոսաֆիկացված է:
5. Համայնքում կա կաթի վերամշակման գործարան, որը հնարավորություն է տալիս արտադրված կաթն իրացնելու: Իրացում կատարվում է նաև Վանաձորում:
6. Համայնքն ունի մեծ թվով բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ և ուսանողներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1. Երկրաշարժի պատճառով ավերվել են գյուղի բնակարանները և համայնքային ենթակայության շինությունները:
2. Արտագնա աշխատանքի մեկնողների թվի մեծացում:
3. Աշխատատեղերի պակաս:
4. Անմխիթար վիճակում են ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները:
5. Համայնքը չունի անհրաժեշտ նյութատեխնիկական բազա գյուղատնտեսական աշխատանքներին օժանդակելու և բերքատվությունը բարձրացնելու համար:
6. Բնակչության մեծ մասը բնակվում են տնակներում:
7. Չկա կոյուղու ցանց
8. Խոտհարքների մեծամասնությունը չեն օգտագործվում՝ ճանապարհ չլինելու պատճառով:

9. Չի կատարվում կազմակերպված աղբահանություն:

10. Անխնա ոչնչացված անտառների պատճառով նկատվում է աղբյուրների ցամաքում և խմելու ջրի պակասում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մեծ աշխատուժի առկայություն
2. Մշակության համար պիտանի հողերի առկայություն
3. Անտառատնկման համար մեծ տարածքների առկայություն

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

1. Գյուղը հորդառատ անձրևներից, սողանքներից և սելավներից, չպաշտպանվելու հանգամանքը
2. Բնակչության մի մասը բացակայում է հանրապետությունից և չի կատարում իր հարկային պարտավորությունները
3. Ճանապարհների անմխիթար վիճակը
4. Կոյուղու բացակայությունը և աղբահանության թերի կատարումը
5. Սարալանջերի մեծ թեքությունների պատճառով արոտավայրերի և խոտհարքների էրոզիան:
6. Գյուղը մայրուղուն կապող ճանապարհի վիճակի հաճախակի վատացումը կապված է ճանապարհի որոշ տեղերի թեքության հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգևոր պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

1. Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը
2. Գազաֆիկացումը հասցնել ավարտին
3. Վերականգնել կտրված շրջակա անտառները
4. Համայնքային ճանապարհները բարեկարգել
5. Կառուցել մանկապարտեզ
6. Լուծել կոյուղու խնդիրը
7. Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով
8. Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային, սպորտային կյանքը և հանգիստը ազատ ժամերին, դրա համար օգտագործել գյուղի դպրոցի հին շենքը:
9. Խոտհարքներում հնարավորության դեպքում կառուցել ճանապարհներ
10. Նորոգել ոռոգման ներքին ցանցը/ջրանցքներ/

Հունվարի 29-ին ժամը 11^{00}- ին Լեռնապատի գյուղապետարանում տեղի ունեցավ համայնքի ժողով, որի ժամանակ քննարկվեցին համայնքի հիմնախնդիրները և դրանց լուծման ծրագրային առաջարկները: Համայնքի անդամներից ստեղծվեց ծրագրերի

կազմման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝ Սարիբեկ Աբազյան, Ապրես Ոսկանյան, Գոհար Շուշանյան, Տաթևիկ Աբազյան, Տարոն Սերոբյան, Ավետիք Աբազյան: Քվեարկությամբ որոշվեց առկա խնդիրների առաջնահերթությունը: 14.02.2013թ. ավագանու թիվ 1 որոշմամբ հաստատվեց քառամյա ծրագրում ներառված խնդիրների առաջնահերթությունը:

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԳԱԶԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Լեռնապատ համայնքը 2002 թ-ից բնակիչների և գյուղապետարանի միջոցներով համայնքի 32% -ը գազաֆիկացվել է: Համայնքն ամբողջովին գազաֆիկացվելու համար անհրաժեշտ է կառուցել ևս 2 կմ երկարությամբ գազատարի ներքին ցանց Հին գյուղում և մոտ 3 կմ ներքին ցանց Նոր գյուղում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ապահովել շուրջ 550 ընտանիքի շուրջօրյա գազամատակարարումը:
2. Լուծել բնակչության կենցաղային խնդիրները
3. Բնակչությանը հնարավորություն տալ ձմռանը ջեռուցել բնակարանները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համայնքի գազաֆիկացումը ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ կառավարությանը, գյուղի ամբողջական գազաֆիկացման գործում անհրաժեշտ ֆինանսական խնդիրները լուծելու համար: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 18 մլն դրամ: Գյուղապետարանն իր միջոցներից բնակչությանն է հատկացրել մոտ 500 գծմ խողովակ:

ԾՐԱԳԻՐ 2

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վանաձոր-Երևան ավտոմայրուղուց Լեռնապատ տանող ճանապարհը ասֆալտապատվել է 1980-ական թթ և վերջին տարիների ընթացքում կապիտալ նորոգման չի ենթարկվել: Առաջացել են բազմաթիվ ջրափոսեր, որոշ հատվածներ դարձել են դժվարանցանելի, որին նպաստել են նաև ճանապարհի եզրերով անցկացված խմելու և ոռոգման ջրագծերը: Խճով և ավազով՝ փոսերի ամենամյա նորոգումը էական արդյունք չի տալիս: Այդ ճանապարհն ունի միջհամայնքային

նշանակություն: Մարզկենտրոնի հետ այդ ճանապարհով է կապվում Հալավար համայնքը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ապահովել տրանսպորտային երթևեկությունը տարվա բոլոր եղանակներին:
2. Համայնքի կապը մարզկենտրոնի և հանրապետության մյուս մարզերի հետ դարձնել կանոնավոր և մշտական:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ձեռնարկվում են միջոցներ միջազգային կամ տեղական ծրագրերի օգնությամբ ասֆալտապատման աշխատանքներ կատարելու համար, որոնք ընթացքի մեջ են:

Աշխատանքներ են տարվում նաև գյուղամիջյան ճանապարհի եզրերի սելավատարների կառուցման ուղղությամբ: Ճանապարհի երկարությունը 4 կմ է: Ճանապարհի ասֆալտապատման/բարեկարգման/ համար պետք կլինի մոտ 240 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1988թ երկրաշարժի հետևանքով գյուղն ամբողջովին զրկվել է բնարանային ֆոնդից: Կատարվել է գյուղի տարհանում՝ տեղափոխվելով 2կմ հեռավորության վրա գտնվող տարածք: Կազմվել է գլխավոր հատակագիծ, որի համաձայն կառուցվել է 124 բնակարան: Անհրաժեշտ է կառուցել ևս 140 բնակարան՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու համար: Բացի այդ կան նաև բնակարան չկորցրած, սակայն այժմ բնակարանի կարիք ունեցող այլ նորաստեղծ ընտանիքներ, որոնց խնդիրը ևս ապագայում պետք է լինի պետության ուշադրության առարկան:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Բարելավել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային կարիքները:
2. Լուծել համայնքի բնակարանային հիմնախնդիրը:
3. Հնարավորության դեպքում նորաստեղծ ընտանիքներին հատկացնել տնամերձ հողամաս բնակարան կառուցելու նպատակով:

ԾՐԱԳՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման դեպքում համայնքի բնակարանային կարիքները կբավարարվեն, կվերանան տնակային տնտեսությունները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացվում է ՀՀ նախագահի անմիջական վերահսկողությամբ և քաղաքաշինության նախարարության ծրագրով: Համայնքի կողմից ֆինանսական միջոցներ չի նախատեսվում:

ԾՐԱԳԻՐ 4

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի գերեզմանների ճանապարհը անմխիթար վիճակում է, քանի որ քսան տարի առաջ է ասֆալտապատվել: Ընթացիկ վերանորոգումներն արդյունք չեն տալիս, քանի որ սելավները քանդում են նորոգած հատվածները: Անհրաժեշտ է կառուցել սելավատարներ և բարեկարգել գերեզմանների տարածքը, ամբողջովին ասֆալտապատել գյուղամիջից մինչև գերեզմաններ ընկած 1կմ ճանապարհը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Բարեկարգել գերեզմաններ տանող ճանապարհը
2. Տարվա բոլոր եղանակներին ճանապարհը դարձնել անցանելի:
3. Ապահովել խմելու ջրի առկայությունը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Դիմել ՀՀ կառավարությանն անհրաժեշտ ֆինանսական աջակցություն ստանալու համար:
2. Գտնել հովանավոր կամ համապատասխան ներդրում կատարող կազմակերպություն, որն ընթացքի մեջ է:
3. Կազմել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նախագծանախահաշվարկային փաստաթղթերը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գերեզմանների ճանապարհը դարձնել բոլոր եղանակների համար անցանելի և բարեկարգ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի համար անհրաժեշտ է՝ ասֆալտապատում մոտ 60 մլն դրամ, գրունտային ճանապարհաշինություն՝ մոտ 15 մլն դրամ, որը չի լուծվի համայնքի բյուջեի միջոցներով, ուստի պետք է դիմել ՀՀ կառավարությանը և բարեգործների ֆինանսական միջոցների ձեռքբերման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 5

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՆՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր գյուղի խմելու ջրի համակարգը կառուցվել է 1989-1991թթ, հետագայում կառուցվել է նաև մեծ տարողությամբ ջրամբար: Ներկայումս Նոր գյուղի բնակչության ավելացման հետ հարկավոր է միջոցներ ձեռնարկել մատակարարվող ջրի քանակն ավելացնելու ուղղությամբ, նկատի ունենալով նաև սեփական հնարավորությունները: Նոր թաղամասի ջրամատակարարման գործընթացը կօգնի նաև ալտերնատիվ աղբյուրի օգտագործումը, որը թույլ կտա ջուր ստանալ ոչ միայն Վանաձորի ջրագծից, այլև օգտագործել սարերի աղբյուրների ջուրը, որը կլինի ավելի մատչելի և էժան:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1. Անհրաժեշտ կլինի ավելացնել Վանաձորի ջրագծից վերցվող ջրի քանակը:
2. Կառուցել մոտ 1.5 կմ ընդհանուր երկարությամբ նոր ջրագիծ՝ թաղամասի խմելու ջրի պահանջները լիովին բավարարելու համար:
3. Արոտավայրերի և անասուններին արոտատեղերում խմելու ջրով ապահովելու համար հարկ կլինի անցկացնել մոտ 800-1000 մ պոլիէթիլենային խողովակաշար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ապահովել մոտ 450 ընտանիք շուրջօրյա խմելու ջրով:
2. Արոտավայրերում ապահովել անասունների համար խմելու ջրով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է դիմել «Լոռիջրմուղ» ՓԲԸ տնօրինությանը, որ գերմանական վարկի 2013 թ ծրագրում ընդգրկվեն Լեռնապատի Նոր գյուղ թաղամասի նորակառույց տներում ապրող ընտանիքները, քանի որ այդ ծրագրի իրականացման նպատակով համայնքը կատարել է 2235 հազ. դրամի ներդրում: Արոտավայրերի և անասուններին արոտատեղերում խմելու ջրով ապահովելու համար հարկ կլինի կատարել լրացուցիչ մոտ 1,5 մլն դրամի ներդրումներ:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման դեպքում Նոր գյուղի բնակչությունն ամբողջությամբ ապահովված կլինի խմելու ջրով: Նոր գյուղի բնակչությանը հուզող մի կարևոր հարց ևս կլուծվի, դա արոտավայրերի և անասուններին արոտատեղերում խմելու ջրով ապահովելու հարցն է:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նոր գյողի խմելու ջրի ներքին ցանցի կառուցման համար անհրաժեշտ ներդրումները կկատարվեն «Լոռիջրմուղ» ՓԲԸ-ի գերմանական վարկի միջոցներից:

ԾՐԱԳԻՐ 6

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի քարաշեն մանկապարտեզը 1988թ երկրաշարժից քանդվել է: Այժմ մանկապարտեզը գործում է փայտե տնակում, չունի մշտական ջուր և կոյուղի: Սանիտարահիգիենիկ պայմանները չեն պահպանվում: Փայտե տնակներում դժվար է պահպանել կայուն ջերմաստիճան, որի պատճառով ձմռան սեզոնին մանկապարտեզը չի գործում: Անհրաժեշտ է կառուցել նոր քարաշեն մանկապարտեզ, ապահովված խմելու ջրով, կոյուղով, գազով և խաղահրապարակով:

Գյուղապետարանը նախատեսում է մինչև նոր քարաշեն մանկապարտեզի կառուցումը, կատարել հնի նորոգումներ, ապահովել, զուգարանով և այլ կոմունալ հարմարություններով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Իրականացնել համայքի երեխաների նախադպրոցական լիարժեք կրթությունը:
2. Երեխաներին ապահովել կենցաղի, հանգստի և խաղերի համար անհրաժեշտ միջոցներով և պայմաններով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Դիմել ՀՀ կառավարությանն անհրաժեշտ ֆինանսական աջակցություն ստանալու համար:

2. Գտնել հովանավոր կամ համապատասխան ներդրում կատարող կազմակերպություն:
3. Կազմել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման դեպքում համայնքի երեխաները կհաճախեն ամուր, տաք, անհրաժեշտ միջոցներով ու պայմաններով ապահովված մանկապարտեզ: Կիրականացվի լիարժեք նախադպրոցական կրթություն: Պայմանների բարելավման շնորհիվ կավելանա մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Քանի որ համայնքի բյուջեով հնարավոր չէ այս խնդրի լուծումը,ուստի պետք է դիմել ՀՀ կառավարությանը ֆինանսական միջոցներ ձեռք բերելու նպատակով:

ԾՐԱԳԻՐ 7

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԳՅՈՒՂԵՐՆ ԻՐԱՐ ԿԱՊՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ, ԾՐԱԳՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼ ՆԱԵՎ ԱՅԼ ՓՈՂՈՑՆԵՐ:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Քանի որ 1988թ երկրաշարժից հետո Լեռնապատ գյուղը տեղափոխվել է նոր վայր, հնից 2 կմ հեռավորության վրա, ապա դա դժվարացնում է կապը հին և նոր թաղամասերի միջև, հատկապես երեկոյան և գիշերային ժամերին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Երկու թաղամասերն իրար կապող ճանապարհի լուսավորության անցկացումը կապահովի թաղամասերի միջև բնակչության շարժը և անվտանգությունը, քանի որ եղել են վայրի գազանների և շների հարձակման դեպքեր գիշերային ժամերին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի մոտ 7.5 մլն. դրամ: Հարկավոր է գտնել ֆինանսավորման աղբյուրներ, ինչն էլ արդեն ձեռնարկվել է:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացումը կապահովի երկու թաղամասերի միջև կապը օրվա ցանկացած ժամերի, իսկ գյուղն կդարձնի լուսավոր ու գեղատեսիլ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այս խնդիրը միայն գյուղապետարանի ուժերով հնարավոր չէ լուծել: Հարկավոր է գտնել ֆինանսավորման աղբյուրներ և բարերարներ:

ԾՐԱԳԻՐ 8

ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Լեռնապատ համայնքը կոյուղու համակարգ երբեք չի ունեցել, Հին գյուղ թաղամասում բնակիչները կառուցում են կեղտահորեր: Նոր գյուղ թաղամասում դա չի արդարացնում: Հողը կավային է, տնամերձերը փոքր: Մեծ է տների խտությունը: Անհրաժեշտ է կառուցել մոտ 11 կմ ընդանուր երկարությամբ կոյուղու համակարգ 200մմ, 300մմ և 500մմ տրամաչափի խողովակներով: Պետք է կառուցել նաև մաքրման կայան, որտեղ կզտվեն կեղտաջրերը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ապահովել թաղամասի բնակիչներին կոյուղու շուրջօրյա անխափան աշխատանքով:
2. Բարելավել թաղամասի կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանները:
3. Կազմակերպել կենտրոնացված աղբահանություն՝ դիմելով մարզային աղբահանությամբ զբաղվող կազմակերպություններին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Դիմել ՀՀ կառավարությանը համապատասխան ֆինանսական աջակցություն ստանալու համար:
2. Գտնել հովանավոր կամ համապատասխան ներդրում կատարող կազմակերպություն:
3. Համայնքից կատարել 10% չափով ներդրում ծրագիրն իրականացնելու համար:
4. Կազմել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման դեպքում մոտ 400 ընտանիք, դպրոցը, համայնքային կենտրոնը և մանկապարտեզը կօգտվեն կոյուղու կենտրոնացված համակարգից: Կբարելավվեն բնակչության կենցաղային պայմանները, կպակասեն վարակիչ հիվանդությունները: Կբարելավվի շրջակա միջավայրի բնապահպանական վիճակը: Կձեռնարկվեն միջոցառումներ նաև աղբահանության կազմակերպման ուղղությամբ՝ սկսելով այն Նոր գյուղից:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 100 մլն դրամ:

Բնականաբար, համայնքի բյուջեի միջոցներով երբևէ անհնար է այս ծրագիրը իրագործելու, ուստի պետք է դիմել ՀՀ կառավարությանը և միջազգային բարեգործական կազմակերպություններին՝ հովանավոր գտնելու:

ԾՐԱԳԻՐ 9

ՍՊՈՐՏ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Խորհրդային տարիներին Լեռնապատն ունեցել է տարբեր սպորտաձևերի իր գյուղական թիմերն ու անհատ մարզիկները, որոնք ինչպես միութենական այնպես էլ հանրապետական մրցույթներում գրավել են պատվավոր տեղեր: Սակայն վերջին տարիներին/երկրաշարժից հետո/ չունենալով հարմարություններ և անհրաժեշտ շենքային պայմաններ, գյուղում սպորտ- մշակութային կյանքը կարծես թե կանգ է առել: Հատկապես երիտասարդությունը չունի զբաղվելու տեղ և հարմարություն:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նման կենտրոնի կառուցումը թույլ կտա ստեղծել խմբակներ տարբեր սպորտաձևերից և մշակութային խմբեր: Ինչն էլ իր հերթին կնպաստի գյուղում կյանքի աշխուժացմանը: Կկազմակերպվի բնակչության ազատ ժամանցի անցկացումը: Հնարավոր կլինի կազմակերպել համագյուղական միջոցառումներ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծրագրի իրականացման համար հարկավոր է դիմել ՀՀ կառավարությանը կամ բարերարներին ֆինանսական օգնության համար: Իսկ որպես կենտրոն նախատեսվում է օգտագործել Հին գյուղում գտնվող դպրոցի նախկին շենքը, որը գյուղապետարանին հանձնելու համար արդեն համապատասխան գրությամբ դիմվել է Լոռու մարզպետարան:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նշված սպորտ-մշակութային կենտրոնի ստեղծումը առավելագույնս կնպաստի գյուղում կյանքի աշխուժացմանը, կօգնի հատկապես երիտասարդության շրջանում սպորտի զարգացմանը, կվերականգնվի տարեցների պարի լեգենդար խմբի գործունեությունը՝ համալրվելով երիտասարդ նոր պարողներով: Կնպաստի գյուղացիների ազատ ժամանակը լավագույնս անցկացնելուն:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կառուցման համար գյուղապետարանն իր միջոցներից կարող է կատարել ներդրումներ: Բայց դա խնդիրը վերջնականապես լուծելուն բավարար չէ: Այդ պատճառով պետք է դիմել ՀՀ կառավարությանը և միջազգային բարեգործական կազմակերպություններին՝ հովանավորներ գտնելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Լոռու մարզի Լեռնապատ համայնքի գյուղապետարանի ֆինանսական վիճակը ունի հետևյալ պատկերը:

հ/հ	Եկամուտի տեսակը	2010. թ. փաստացի	2011 թ. փաստացի	2012 թ. փաստացի	2013թ. կանխիկ	2014 թ. կանխիկ	2015 թ. կանխիկ	2016 թ. կանխիկ
	Եկամուտներ ընդհ.	41283.2	39531.0	41153.7				
1	Հարկային եկամուտներ	6043.2	6381.8	5731.4				
1/1	Հողի հարկ	5392.2	5565.2	4794.5				
1/2	Գույքահարկ	651.0	816.6	936.9				
2	Տուրքեր	146.0	182.0	810.0				
3	Ընդ. ոչ հարկային եկամուտներ	2307.4	2272.0	2478.9				
3/1	Պահուստային հողերի վարձավճար	1867.6	1926.2	2251.4				
3/2	Այլ տեղ. Տուրքի գանձ. Վճարներ	439.8	345.8	227.5				
4	Պաշտոնական տրանսֆերտ	27819.2	26752.3	27390.3				
4/1	Դոտացիա պետ. Բյուջե	27819.2	26752.3	27390.3				
5	Տարեսկզբի ազատ մնացորդ	4967.4	3942.9	4743.1				

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌ. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	Ցուցանիշներ	Չափի միավոր	2010. թ. փաստ	2011 թ. փաստ	2012 թ. փաստ	2013թ. կանխ	2014 թ. կանխ	2015 թ. կանխ	2016 թ. կանխ
1.	համայնքի տարածքը	Հա	3585.51	5231.70	5231.70				
2.	բնակչության թիվը	Մարդ							
3.	ծնունդը	Մարդ	29	23	16				
4.	մահացությունը	Մարդ	17	15	17				
5.	Աշխ. ռեսուրս	Մարդ							
6.	Առևտրի և սննդի օբեկտների թիվը	Հատ	6	6	6				
7.	Պահուստային վարձ. հողեր	Հա	590	590	740.37				
8.	Պահուստային հողերի օգտագործ. մակարդակ	%	20.34	12.98	16.29				
9.	Կենցաղի ջրի ներհամ. ցանցի երկարություն	Կմ	30	30	30				
10	Ներհամ. ոռոգման ցանցի երկարություն	Կմ	5	5	5				
11	Ոռոգվող հողեր	Հա	112.10	112.10	112.10				
12	Ներհամ. փողոց. և ճանապ. երկարութ.	Կմ	27	27	27				
13	Չբարեկարգված փողոց. և ճան. երկարութ.	Կմ	27	27	27				
14	Մասն. բնակ ֆոնդ	Հզ. Քմ	11.16	11.05	12	15			
15	Բնակ կարիքավոր ընտանիքների թիվը	Հատ	291	287	285	250			
16	1 շնչին ընկնող կենցաղի ջրի սպառումը	1լ/ օր	50	50	50				
17	Սովորողների թիվը հանրակ. դպրոցում	Աշակերտ	242	240	238	234			
18	Երեխաների թիվը մանկապարտեզում	Երեխա	25	25	25	25			
19	գ/պ և ենթակառույցների աշխատողների թիվը	աշխատող	22	20	20	20			

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1	Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը	629
ա	Անհատական կոլեկտիվ տնտեսություն	-
2	Գյուղ արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը	
ա	Կարտոֆիլ	5250ց
բ	Հացահատիկ	220ց
գ	Բանջարեղեն	7562ց
դ	Միրգ	4406ց
ե	Խոտ	7000ց
զ	ծղոտ	110ց
է	կաթ	6000լ
ը	միս	150տ
թ	բուրդ	157կգ
ժ	ձու	750000 հատ
ի	մեղր	4000տ
3	ցանքատարածությունները	
ա	կարտոֆիլ	35հա
բ	հացահատիկ	42 հա
գ	խոտ	11հա
դ	բանջարեղեն	6.9հա
ե	Բազմ.տնկարք	3հա
4	Անասնագլխաքանակը՝	
ա	Խոշոր եղջերավոր անասուններ	904
	Այդ թվում կովեր	530
բ	Մանր եղջերավոր անասուններ	384
	Այդ թվում մայրեր	
գ	խոզեր	92
	Այդ թվում մայրեր	
դ	Թռչուններ	800
	Այդ թվում հավեր	789
ե	մեղվաընտանիքներ	375
զ	Բանող անասուններ	
5	Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը	
ա	Թրթուրավոր տրակտորներ	1
բ	Անիվավոր տրակտորներ	4
գ	Հացահատիկի կոմբայն	-
բ	Տրակտորայի կցասայլեր	3
ե	գութաններ	-
զ	կուլտիվատորներ	-
է	շաքարացաններ	-
ը	Խոտի մամլիչներ	2
թ	Բեռնատար ավտոմեքենաներ տարբեր մակնիշի	16
ժ	Հատիկազտիչ մեքենաներ	-

Հավելված 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ա) Մանկապարտեզի փայտե մասնաշենքը - կառուցված է երկրաշարժյան տարիներին: Ոչ մի անգամ չի ենթարկվել վերանորոգման, չունի որևէ հարմարություն երեխաների նորմալ դաստիարակության համար: Չունի կոյուղի, սանհանգույց, նորմալ խաղահրապարակ, խմելու ջուր: Կոտրված են լուսամուտների ապակիները, ներկաթափված են պատերն ու հատակը:

Բ) Վագոն տնակը- միայն արտաքինից է նման վագոն տնակի: Փտած են ներսի փայտե մասերը:

Գ) Մանկապարտեզի կաթսայատունը- հիմնովին ավերված վիճակում է:

Դ) Վառարանը- դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

Ե) Քարե շինությունները- պահպանված են միայն պատերը:
Նշված շինություններից ոչ մեկը պիտանի չէ հետագա օգտագործման, առանց նորոգումների:

Զ) Փայտե ֆրանսիական հավաքովի տնակ- կառուցված է երկրաշարժից հետո:

Է) Ավտոմեքենա <Օպել վեկտրա>- արտադրությունը 1991թ

Ը) Ավտոբուս <Պազ 672>- արտադրությունը – արտադրությունը 1984թ.